ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԿԳՄՍՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների մեջ ինքնուրույնության զարգացումը խմբային մեթոդի կիրառմամբ

Անցկացման վայրը՝ ՄԱՐՏՈՒՆԻ

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Մարինե Վարդանյան

Դպրոց՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքարի միջնակարգ դպրոց

Մարտունի 2022թ.

Բովանդակություն

1.Ներածություն 3
2. Գրական ակնարկ 6
3. Փորձարարական հետազոտություն 10
3.1-Խմբի նկարագիրը 10
3.2-Փորձարարական դասեր 10
3.2.1-Փորձարարական դաս-1 10
3.2.2-Փորձարարական դաս-2 11
4. Եզրակացություն 12
5. Օգտագործած գրականության ցանկ 123
6. Հավելված ..... Ошибка! Закладка не определена.4
Դասապլան-1 ..... Ошибка! Закладка не определена.4
Դասապլան-2 ..... Ошибка! Закладка не определена.8

1.Ներածություն

Կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Աշակերտների ինքնուրույն գործունեությունը կարևոր է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներում: Ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Ինքնուրույն գործունեության նպատակը նոր սերնդին կյանքին, աշխատանքին նախապատրաստելն է: Ինքնուրույն գործունեության նպատակը բոլոր ժամանակներում որոշվում է հասարակական պահանջներով, գիտատեխնիկական առաջընթացի զարգացումով, մանկավարժության տեսության և պրակտիկայի զարգացման մակարդակով, ուսումնական հաստատություններով և ուսուցիչների զարգացման մակարդակով: Ինքնուրույն գործունեության նպատակի սահմանման հարցը որքան հին է, այնքան էլ արդիական է: Ժամանակակից կրթական աշխարհում գնալով մեծանում է սովորողների ինքնուրույն ուսումնառության դերը: Սա ենթադրում է, որ պատասխանատվությունը ուսուցչից անցնում է աշակերտին: Աշակերտներն սկսում են հասկանալ իրենց ուսումնառությունը, ավելի մոտիվացված են, ունեն ավելի բարձր ինքնարժևորում, քան մյուսները: Աշակերտների մոտ զարգանում են այնպիսի հմտություններ, որոնք օգնում են նրանց կիրառելու տարբեր ռազմավարություններ, կարծիք ձևավորելու համար օգտագործել սեփական գաղափարները: Ի վերջո, ինքնուրույն ուսումնառությունը ենթադրում է նաև բարձր ակադեմիական նվաճումներ: Սակայն այս գործընթացում ուսուցիչները ունեն կարևոր դեր: Առաջին հերթին ուսուցիչը պետք է օգնող պատվար ստեղծի աշակերտի համար: Նաև ամբողջ ընթացքում ուսուցիչը պետք է սովորողին մղի ինքնամշտադիտարկման՝ օգնելով նրանց օգտագործել ներքին և արտաքին հետադարձ կապ՝ ստուգելու նրանց կիրառած ռազմավարությունների արդյունավետությունն ուսումնառության նպատակներին հասնելու համար: Այստեղ շատ կարևոր է և՛ ուսուցչի տված հետադարձ կապը, և՛ սովորողի կողմից կատարվող ինքնագնահատումը: Հատկապես ռուսաց լեզվի

դասավանդման ընթացքում ուսուցիչը պետք է կարողանա այնպիսի դասարանային աշխատանքներ պլանավորի, որոնք խթան կհանդիսանան ստեղծագործական մոտեցման և բազմազան տարբերակված առաջադրանքների համար, սովորողին հնարավորություն տալով սեփական աշխատանքը ներկայացնելու տարբեր եղանակներով, այդ թվում՝ տեսահոլովակների, գրավոր և բանավոր ներկայացումների միջոցով, այդպիսով խթանելով սովորողների ինքնուրույնության զարգացումը: Այստեղ կարևոր է նաև ուսուցչի նկատմամբ վստահությունը, որպեսզի սովորողը կարողանա կիսվել իր մտահոգություններով և դժվարություններով: Կարևոր է նաև ՏՀՏ-ի օգտակար դերը, որը բացի նյութի որոնման աղբյուր լինելուց, հաղորդակցման միջոց է ապահովում աշակերտների և սովորողների համար: Ուսուցիչը հետադարձ կապ տալով՝ կատարում է աշխատանքի գնահատում ողջ ընթացքում:

Կարևոր է, որ ուսուցիչը օգնի սովորողին ճիշտ ընկալել և սահմանել ուսումնառության նպատակները:

Տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքը մեծ դեր ու նշանակությունունի:

Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը,որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը,դրա կատարման կարգը և կատա-րում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության:

Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց:

Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ:Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում ինքն իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս,դասարանից դասարան:Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպման շնորհիվ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները,դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնելայն կարողությունները,որոնք ռուսաց լեզվի առանձնահատկություններից ելնելով պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար: Սովորողների մեջ ինքնուրույնության զարգացման գործում կարևոր դեր կարող է ունենալ ռուսաց լեզու առարկան, որպես

օտար լեզու, նպաստելով սովորողների կողմից խմբային ուսուցման մեթոդի շնորհիվ՝ նոր գիտելիքներ ձեռք բերելուն և իմացածը ավելի արդյունավետ արտահայտելուն,ռուսաց լեզվի առանձնահատկություններին ավելի լավ տիրապետելուն:

ՀՀ կրթական համակարգում ռուսաց լեզվի ուսումնասիրման և դասավանդման համակարգի զարգացման նպատակներն են՝

_ սովորողի բազմակողմանի զարգացումը ռուսաց լեզվի՝ հաղորդակցական կարողությունների ձևավորման միջոցով,
_ ռուսաց լեզվի հանրայնացման և Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում ռուսաց լեզվի դասավանդման և ուսումնասիրման համակարգի զարգացման հիմնախնդիրների համակարգային լուծումները,
_ ռուսաց լեզվի կրթական ծրագրերի բովանդակության, ինչպես նաև ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի արդիականացումը,
_ ռուսաց լեզու դասավանդողների աշխատանքի որակի բարձրացումը,
_ հանրամատչելի տեղեկատվական պաշարների զարգացումը, որն անհրաժեշտ է կրթական ծրագրերի, այդ թվում նաև էլեկտրոնային ուսուցման, սովորողների և մանկավարժների գործունեության իրականացման համար,
_ բարձրացնել կրթական համակարգի բոլոր աստիճաններում (նախադպրոցական, դպրոցական,բուհական) ռուսաց լեզվի ուսուցման որակը:
_Աշակերտի ինքնուրույնության զարգացումը

Ռուսաց լեզվի ուսումնասիրման և դասավանդման համակարգի զարգացման խնդիրներն են՝

_ Յուրաքանչյուր սովորողի համար պարտադիր գիտելիքների ցանկ
_Լեզվական կարողությունների և հմտությունների տիրապետում
_Սովորողների հոգևոր ոլորտի զարգացում
_ Ընդլայնել սովորողների հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները
_ Զարգացնել սովորողների ինքնուրույն աշխատանք կատարելու ունակությունը

2. Գրական ակնարկ

Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև:

Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները՝ հատկապես խմբային մեթոդի իրառմամբ զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը,ինքնուրույն վերլուծություններ անելու ու մեկնաբանելու կարողությունը, իսկ ռուսաց լեզուն լավագույնս նպաստում է այդ գործընթացին:

Ռուսաց լեզվի դասավանդման գործընթացում ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացման խնդրին անդրադառնալիս անհրաժեշտ է գործունեության, ինքնուրույն աշխատանքի արդյունավետության խնդիր դնել: Անկասկած, ինքնուրույն աշխատանքն առաջին պլան է մղում սովորողների գործունեությունը, իսկ աշակերտն ինքը՝ որպես ակտիվ ստեղծագործ անձնավորություն, հանդիսանում է նրա մշակույթի, էրուդիցիայի ու ապագա գործունեության կերտողը: *Սովորողների ինքնուրույնության* դրսևորվում է ինքնուրույն աշխատանքի նպատակներ դնելու, այն պլանավորելու, մեթոդների որոշման, ինքնամոբիլիզացիայի և ինքնատիրապետման, արդյունքների գնահատման մեջ: Աշակերտների ինքնուրույն աշխատանքը պահանջում է ինտենսիվ մտածողություն, տարբեր ճանաչողական առաջադրանքների լուծում,ռուսաց լեզվի իմացության որոշակի մակարդակ, նշումներ կատարելը, ուսումնական տեղեկատվության ըմբռնումն ու մտապահումը և այլն:

Ինքնուրույն աշխատանքը կարևոր գործոն է սովորողների առաջիկա գործունեությանը տեսական և գործնական նախապատրաստման, անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների, բարոյական և մտավոր

որակների ձևավորման համար: Ժամանակակից պայմաններում մեծացել է հենց աշակերտի պատասխանատվության նշանակությունը թե՞ կրթական գործունեության, թե՞ նրա հայացքի, գիտելիքների, թե՞ կոնկրետ առարկայական, թե՞ ընդհանուր բովանդակության զարգացման համար: Ռուսաց լեզվի ուսուցման ընթացքում գիտելիքի ինքնուրույն ձեռքբերման ցանկությունն է, որ պետք է ամեն կերպ խրախուսվի բոլոր կրթական համակարգերում, այստեղ է, որ ռուսաց լեզվի ուսուցիչը պետք է ընտրի դասավանդման առավել արդյունավետ մեթոդ, որը կխթանի սովորողների ինքնուրույնության զարգացումը, այդ արդյունավետ մեթոդներից մեկը կարող է լինել խմբային ուսուցման մեթոդը:

Դասագրքի հետ ինքնուրույն աշխատանքին պետք է նախորդի ուսուցչի մանրամասն զրույցը: Այս զրույցի ընթացքում ուսուցիչը նախ և առաջ պետք է ճշգրիտ բացահայտի նյութի թեման, ընդհանուր պատկերացում կազմի բովանդակության մասին, սովորողների ուշադրությունը հրավիրի այն հարցերի վրա, որոնք նրանք պետք է սովորեն, ինչպես նաև խորհուրդներ տա ինքնուրույն աշխատանքի վերաբերյալ:

Այս ամենից ելնելով՝ սովորողները պետք է զարգացնեն բարձր պատասխանատվություն սեփական սկզբունքների հանդեպ, որպեսզի խմբային ուսուցումը հաջողություն ունենա: Խմբային ուսուցումն, անշուշտ, ունի նաև այն իրականացնելու դժվարություններ: Խմբային աշխատանքի ժամանակ հատուկ կարիք ունեցող սովորողները ևս կարող են ներառվել աշխատանքի մեջ՝ բացահայտելով իրենց թաքնված ընդունակությունները: Արդյունքում բարձրանում է սովորողի ինքնագնահատականը, և նա դառնում է ավելի ինքնավստահ: Խաղը կարող է օգնել միջանձնային կոնֆլիկտների լուծման ավելի արդյունավետ ճանապարհներ գտնելուն:

Ռուսաց լեզվի ուսուցիչը, ռուսաց լեզվի միջոցով ի թիվս այլ արժեքների՝ պետք է աշակերտներին սովորեցնի նաև միասին աշխատել՝ նրանց ներգրավելով իմաստալից ուսումնական ծրագրերում, որպեսզի այդ ամենը հետագայում կիրառեն կյանքում:Միաժամանակ պետք է նպաստի, որ յուրաքանչյուր սովորող՝

_ դառնա ինքնուրույն մարդ,

_ վերլուծի իր արարքները, վարքը,

_ինքնակատարելագործվի

Ռուսաց լեզվի դասավանդման խմբային ուսուցման մեթոդի կիրառման ընթացքում աշակերտները խմբով աշխատում են ուսուցչի հանձնարարած կոնկրետ խնդրի վրա: Խմբային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

_ դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,

_ բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,

_ ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը

_ Սովորողների ինքնուրույնության զարգացման՝ ռուսաց լեզվի ընձեռած հնարավորությունները

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդը խթանում է սովորողների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերի թե՛ լեզվի իմացության մակարդակը և թե ռուսաց լեզվի ուսուցման ընթացքում ձեռք բերած ինքնուրույնությունը:

Դրական կողմերը

Ռուսաց լեզվի խմբային ուսուցումը , ելնելով իր կառուցվածքից, կարող է մի քանի գործառույթներ իրականացնել, որոնք ակնհայտ կերպով դասարանային ուսուցման շրջանակներում սահմանափակ են՝

_ Խմբային ուսուցման ժամանակ ավելի շատ սովորողներ կարող են մասնակցել դասընթացին , քան դասարանային ուսուցման ժամանակ,

_ Նրանք կարող են թիմային զգացում հաստատել և այն զարգացնել խմբում,

_ Նրանք կարող են ինքնուրույն աշխատել,
_ Նրանք կարող են հետաքրքրություն ցուցաբերել,
_ Նրանք կարող են ուսուցչի կողմից նոր թեմայի վերաբերյալ չնախատեսված տեսակետներ առաջ քաշել և աշխատել դրա շուրջ,
_ Խմբային ուսուցումը թույլ է տալիս ուսուցչին իր սովորողներին հստակորեն , ավելի պարտավորված կերպով տարբեր դերերում հետևել, քան դասարանային ուսուցման պարագայում է
_Խթանում է սովորողների ինքնուրույնության զարգացմանը:

Բացասական կողմերը

_Խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»:
_Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է:
_ Խմբային ուսուցումը ավելի շատ ժամանակ է պահաջում, քան դասարանային ուսուցումը, քանի որ սովորողներին ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ առաջադրված աշխատանքը , խնդիրը լուծելու համար:

3. Փորձարարական հետազոտություն

3.1-Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքն անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Ծակքարի միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանում, սովորողների կողմից ռուսաց լեզվի դասերի յուրացվածության մակարդակը ստուգելու, ինչպես նաև հանձնարարված թեման ներկայացնելիս սովորողների ինքնուրույնությանը նպաստելու համար, ես որոշեցի իմ փորձորարական դասերի համար կիրառել «**Խմբային ուսուցման**» մեթոդը:

Այս դասարանում սովորում են 20 աշակերտ՝ 9 աղջիկ և 11 տղա, որոնք ունեն տարբեր ընդունակություններ:

Ռուսաց լեզու առարկան անցնում են շաբաթական 2 ժամ, այն դասացուցակում տեղադրված է 2 և 3-րդ ժամերին:

Այս դասարանի հիմնական խնդիրները.

_ Թեման հանգամանալից պատասխանելու և վերլուծելու կարողականությունն է

_ Ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին

_ Ինքնուրույնությունն է դասապրոցեսի ընթացքում

3.2-Փորձարարական դասեր

3.2.1-Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը՝ «Белая шубка»թեման է:

Քանի որ ընտրված է «**Խմբային ուսուցման**» մեթոդը, աշակերտներին բաժանեցի երեք խմբի և հանձնարարեցի մի քանի անգամ լավ ուսումնասիրել դասի թեման: Դասը սկսվեց նախ հարցերի միջոցով աշակերտների պատրաստվածության մակարդակը ստուգելով, այնուհետև ծավալվեց քննարկում երեք խմբերի միջև: Այնուհետև սովորողները՝ դասպրոցեսին սկսեցին առաջարկված մեթոդով պատասխանել դասը,միմյանց ուղղելով հարցեր,քննարկելով:

Իմ նպատակը սովորողների ինքնուրույնության մակարդակի բարձրացումն էր, հետևաբար հանձնարարեցի, որ խմբի յուրաքանչյուր անդամ իր պատկերացումների շրջանակներում ու իր բառապաշարով մեկնաբանի թեման, ընթացքում աշակերտներին ուղղորդող հարցեր տվեցի, և օգնեցի սխալ արտասանված բառերը ուղղել:

Այս մեթոդի արդյունքում ինձ հաջողվեց ամբողջ դասարանին ներգրավվել դասապրոցեսում:

Դասապրոցեսն ավարտելուց հետո, բացատրեցի նոր դասը և աշակերտներին հանձնարարեցի նույն մեթոդով, տանը պատրաստել նոր թեման՝ «Пришла зима весёлая с конькам и салазкамы» բաժնից՝ Ա. Ս. Պուշկինի «И вот уже трещат морозы….»բանաստեղծությունը:

Միավորային գնահատականներ ստացան աշակերտներից հինգը:

Հաղորդվեց տնային աշխատանքը վարժ. 5, վարժ. 6, էջ 101

3.2.2-Փորձարարական դաս-2

Հասկանալու համար, թե սովորողները որքանո՞վ են ընկալել նախորդ դասը, որքանո՞վ են հիշում թեման՝ դասը սկսեցի նախորդ թեմայի վերաբերյալ հարցեր տալով և թեմայի վերաբերյալ քննարկմամբ: Այնուհետև բանաստեղծությունն անգիր արտասանելուց հետո, սովորողները օգտագործելով «խմբային ուսուցման» մեթոդը, սկսեցին տրված նյութը ակտիվ քննարկել, և վերլուծել, ինքնուրույն մեկանաբանություններ անելով թե դասի թեմայի և թե Ա. Ս. Պուշկինի ստեղծագործությունների վերաբերյալ:

Աշակերտները դասագրքից կարդացին իրենց առավել հետաքրքրած հատվածները, վերլուծեցին դրանց գեղագիտական նշանակությունը:

Դասի վերջում հանձնարարվեց բաժնի ամփոփում՝ վեց աշակերտներ արժանացան միավորային գնահատականների:

Հաղորդվեց տնային աշխատանքը վարժ. 11 էջ 105, վարժ. 13 էջ 106

4. Եզրակացություն

Երկու փորձարարական հետազոտությունների արդյունքում, եկա այն եզրակացության, որ կրթության կազմակերպման հարցերում սովորողների ինքնուրույնության զարգացմանը նպաստելը «խմբային ուսուցման» մեթոդով բավականին արդյունավետ է, դասապրոցեսի համար, որովհետև դրա շնորհիվ՝ աշակերտների հետ աշխատանքն ամբողջացվեց, առավել պասսիվ աշակերտվերը ներգրավվեցին դասապրոցեսին, մասնակցելով քննարկումներին և հարց ու պատասխաններին,և կատարեցին ինքնուրույն եզրահանգումներ:

Միաժամանակ եկա այն համոզման, որ ռուսաց լեզվի ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Խմբային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Այս մեթոդը հնարավորություն տվեց, որ սովորողը ձեռք բերի ինքնուրույնություն և զարգացնի սեփական հմտությունները: Ուսուցման խմբային մեթոդը նպաստում է սովորողների մտածողության զարգացմանը, լայնացնում է մտահորիզոնը, ձևավորում ճկուն միտք, ստեղծագործական հայացք: Խմբային ուսուցման իմ այս փորձը ստացվեց բավականին ինքաբուխ, երբ խմբերում ներառված աշակերտներից յուրաքանչյուրը լավագույնս դրսևորեց իր ինքնուրույնությունը: Այս մեթոդը դարձավ աշխատանքային փուլի լավագույն լուծումներից մեկը: Դասընթացի կազմակերպման ընթացքում ստեղծվեցին ժամանակավոր փոքրիկ խմբեր, որոնք միահամուռ կերպով առաջադրված թեմայի շուրջ աշխատում էին ինքնուրույն: Խմբային մեթոդով աշխատելով սովորողների հետ՝ կարողացա բացահայտել նրանց ներքին աշխարհի մինչ օրս չբացահայտված մի շարք առանձնահատկություններ, ավելի լավ ծանոթանալ նրանց հետքրքրություններին, ստեղծագործ մտքին, վառ երևակայությանը, չկրկնվող գունեղ աշխարհին:

5. Օգտագործված գրականության ցանկ

1. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, 96 էջ: 3.

2.Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Եր., 2004, 336 էջ:

3. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Եր. 2006,

4.Վարդումյան Ս., Ձաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Եր., 2005, 402 էջ

5. Տ.Բաբայան, Մ. Եղիազարյան, Ս.Լալայանց, Ռուսաց լեզու. 5-րդ դասարան, Եր. 2018, 192 էջ

6.Հավելված

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Մարինե Վարդանյան

Առարկա՝	Ռուսաց Լեզու	Ամսաթիվ	20.05.2022	Կիսամյակ	II	Դասարան	V
Թեմա՝	«Белая шубка» Ուսուցանել «Пришла зима весёлая с конькам и салазкамы» բաժնից՝ Ա. Ս. Պուշկինի «И вот уже трещат морозы….»բանաստեղծությունը						
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան, համացանց*						

Դասի նպատակը՝	Ծանոթացնել ռուս գրականության հետ Կարևորել ռուսաց լեզվի և ռուս գրականության ինքնուրույն մեկնաբանումը աշակերտների կողմից Ձևավորել հմտություններ ռուսերեն տեքստը անսխալ վերարատադրելու, մտքերը ռուսաց լեզվով ինքնուրույն և անկաշկանդ արտահայտելու
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	**Աշակերտները կկարողանան.** Հաղորդակցվել ռուս գրականության հետ Ձևավորվել պատկերացում ռուսաց լեզվի և գրականության մասին Դրսևորել հետաքրքրություն ռուսերենի նկատմամբ Արժևորել ռուս գրականության տեղը՝ համաշխարհային գրականության շարքում

Գործողություններ(ժամ/տևողություն)	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Ուսումնական գործունեություն** ***Ուսուցիչ***	**Հարցադրումներ**	**Կիրառվողմեթոդ(ներ)**
Տրոպե-սկիզբ	**Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:** **Ներկայացնել տնային**	**Ողջունել դասարանին, և/բ:** **Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը**		

10րոպե-ընթացք	աշխատանքները Պատասխանել հարցերին Փոխադարձ հարցեր տալ, փակ հարցերին պատասխանում են ,,ցածր,, առաջադիմություն ունեցող աշակերտները՝ ստեղծելով ,,հավելյալ,, արժեքներ 4 աշակերտ կատարում են առաջադրանքները գրատախտակին, մյուսները կատարում են նշումներ տետրերում	Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցադրումներ Գրատախտակին գրել տարբեր նախադասություններ,կատարել վարժություններ, դուրս գրել դժվար բառերը և կատարել թարմանություններ Հետևել կատարվող աշխատանքներին, կատարել շտկումներ	*1.Ի՞նչ հասկացաք դասից* *2.Ի՞նչ դժվարություններ ունեցաք դասը սովորելիս* *3.Որքանո՞վ օգնեց ձեզ խմբային ուսուցման մեթոդը*	***Խմբային ուսուցման մեթոդ***

15րոպե 12րոպե 3րոպե-ավարտ	Աշակերտները «Խմբային ուսուցման» մեթոդով սկսեցին քննարկել տրված թեման. Ներկայացրեցին իրենց պատկերացումները Նոր Տարվա և եղևնու մասին Վերլուծեցին, բնութա-գրեցին,համեմատե-ցին, կարծիքներ հայտնեցին: Ծանոթացան. Նոր բառերի և հասկացություններ ի հետ պատմեցին դասը *Լուռ լսել դասը , կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր, աշխատանք դասագրքի հետ*	Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանվոր, գրավոր հետադարձ կապ: Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում		*Խմբային ուսուցման մեթոդ* *Կարճ դասախոսություն՝ ստեղծելով միջառարկայական կապ(հայոց գրականություն)*
Տնային աշխատանք	*Վարժ. 5, վարժ. 6, էջ 101*			

Դասապլան-2

Ուսուցիչ՝ Մարինե Վարդանյան

Առարկա՝	Ռուսաց Լեզու	Ամսաթիվ	24.05.2022	Կիսամյակ	II	Դասարան	V
Թեմա՝	«Пришла зима весёлая с конькам и салазкамы» բաժնից՝ Ա. Ս. Պուշկինի «И вот уже трещат морозы….»բանաստեղծությունը						
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, համացանց*						
Դասի նպատակը՝	Ծանոթանալ Ա.Ս. Պուշկինի հայերիս քիչ հայտնի ստեղծագործության հետ Իմանալ և ճանաչել նրա ստեղծագործությունները Թեման պատմել, կատարել համապատասխան վարժությունները						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Ինքնուրույն վերլուծել և մեկնաբանել Ա.Ս. Պուշկինի ստեղծագործությունները Տեքստը վերլուծել և կատարել ինքնուրույն եզրահանգումներ Համեմատական անցկացնել ժամանակի հայ հեղինակների հետ						
Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն		Ուսումնական գործունեություն		Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ (ներ)	

	Աշակերտներ	*Ուսուցիչ*		
5րոպե-սկիզբ 10րոպե-ընթացք 10 րոպե	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:Ներկայացնել տնային աշխատանքները Բոլոր աշակերտների մասնակցությամբ քննարկվեց տնային աշխատանքները, սխալները ուղղելու նկատառման դրանք գրվեցին գրատախտակին, հնչեցվեցին հետաքրքրող հարցերը, ստեղծվեց «հավելյալ» գիտելիք Պատասխանել հարցերին, տալ փոխադարձ հարցեր, հնչեցնել կարծիքներ, կատարել նշումներ տետրերում	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը Նախորդ դասաժամին կատարված աշխատանքի քննարկում, սխալների քննարկում և բացատրում, բանավոր առաջ մղող հետադարձ կապի տրամադրում Նոր թեմայի հաղորդում աշակերտների մասնակցությամբ	1.Ի՞նչ հասկացաք դասից 2.Ո՞րն էր դասի նմանությունը նախորդ թեմային 3.Ո՞րն էր տարբերությունը նախորդ թեմայից 4.Ո՞վ է Ա.Ս. Պուշկինը Ինչի՞ մասին էր նրա բանաստեղծությունը	*Խմբային*

				ուսուցման մեթոդ
15րոպե	Խմբային ուսուցում աշակերտների ինքնուրույնությունը բարձրացնելու նպատակով աշակերտները կատարեցին դասագրքից 8-րդ և 9-րդ վարժությունները՝ էջ 105	Թեման ամրապնդելու, ամփոփելու, ինչպես նաև ամբողջ դասարանի ներգրավվածությունը ապահովելու համար աշակերտները վերլուծեցին դասը, խոսեցին իրենց եզրահանգումների մասին Տրամադրվեց առաջ մղող բանավոր հետադարձ կապ և ուղղորդումներ Թեման ամփոփվեց հարց ու պատասխանով Տնային աշխատանքի հանձնարարում		*Խմբային ուսուցման մեթոդ*

	Յուրաքանչյուր աշակերտ պատմեց իր հավանած կերպարի մասին			*Դասագրքից կատարվեցին վարժություններ*
4որպե-ավարտ	Բաժնի ամփոփում Տնային աշխատանքի			

1Դրոպե	հաղորդում			
Տնային աշխատանք	*Վարժ. 11 էջ 105, վարժ. 13 էջ 106*			